# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
# ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19


Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի նախագահ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասով, ինչպես նաև 67-րդ հոդվածի 1-ին մասով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերը:

Ազգային ժողովի աշխատակարգի վերաբերյալ 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. Օրենքի նախագծերը
2. Օրենքի նախագծերի ընդունման հիմնավորումը
3. Գործող օրենքների փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքները:

Նախագծերի հիմնական զեկուցողն է պատգամավոր Արթուր Դավթյանը:

Խնդրում եմ ներկայացված օրենքի նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 16 թերթ:

Հարգանքով՝

Արթուր Դավթյան


0095, Երևան, Մ.Բաղրամյան 19, հեռ. (011) 51-32-62, էլ.փոստ՝ artur.davtyan@parliament.am

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 1) «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «հայցի ապահովման բոլոր կատարողական վարույթները» բառերը փոխարինել «ոչ գույքային բնույթ ունեցող բոլոր կատարողական վարույթները, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների» բառերով.

2) Օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը լրացնել նոր պարբերություն.

«Կարճվում են գույքային բռնագանձումներով, և ոչ գույքային բնույթ ունեցող բոլոր կատարողական վարույթները, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների:».

***Հոդված 2.*** Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի

1) 2-րդ կետում «դրամական կամ այլ» բառերը փոխարինել «գույքային» բառով:

2) 4-րդ կետում «պարտապանի դեմ պարտատերերի» բառերից հետո լրացնել «գույքային» բառով.

3) 5-րդ կետում «հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «գույքային բռնագանձման և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների և սույն օրենքով սահմանված այլ դեպքերի» բառերով:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 4-րդ կետում լրացնել նոր պարբերություն.

«Պարտապանի մասնակցությամբ ոչ գույքային բնույթ ունեցող՝ վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթները սույն կետի հիմքով կասեցման ենթակա չեն:».

***Հոդված 2.*** Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը լրացնել նոր պարբերություն.

« Պարտապանի մասնակցությամբ ոչ գույքային բնույթ ունեցող՝ վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթները սույն կետի հիմքով կարճման ենթակա չեն:».

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ</u>

<u>««ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»</u>

<u>ԵՎ ««ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ</u>

<u>ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</u>

*<u>«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ հիմնավորումները.</u>*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում են գույքային բռնագանձումներով և հայցի ապահովման բոլոր կատարողական վարույթները:

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝

1) պարտապանի պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված.

2) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի.

3) դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը.

4) կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով.

5) կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի.

6) վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները:

Մեջբերված իրավանորմերից հետևում է, որ կատարողական վարույթով պարտապանի սնանկությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ազդում է վերջինիս՝ որպես պարտապան ներգրավվածությամբ կատարողական բոլոր վարույթների ընթացքի վրա, մասնավորապես՝ կատարողական վարույթով պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում կարճվում են պարտապանի մասնակցությամբ կատարողական բոլոր վարույթները, որտեղ վերջինս հանդես է գալիս որպես պարտապան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, անձի սնանկության գործընթացն ու բուն սնանկությունն ազդեցություն են ունենում վերջինիս՝ որպես պարտապան ներգրավվածությամբ կատարողական բոլոր վարույթների վրա և հանգեցնում դրանց կարճմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ընդ որում՝ ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված այդպիսի բացառությունների շարքում ընդգրկված չեն այն կատարողական վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին առաջադրվելու են ոչ գույքային բնույթի պահանջներ, այսինքն՝ Օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ինչպես նաև 39-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հիման վրա կարճման են ենթակա պարտապանի մասնակցությամբ այն կատարողական վարույթները նաև, որոնցով պարտապանին կատարման են առաջադրվում ոչ գույքային բնույթի պարտականություններ, օրինակ՝

- Այլ անձին հասցված վիրավորանքի համար ներողություն խնդրելու ոչ գույքային բնույթի

պարտականություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1087.1 հոդված, 7-րդ մաս, 1-ին կետ),

- Այլ անձի վերաբերյալ կատարված, զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալները հերքելու ոչ

գույքային բնույթի պարտականություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1087.1 հոդված, 8-րդ մաս, 1-ին կետ),

- Այլ անձի սեփականության իրավունքի խախտման վերացմանն ուղղված գործողություններ կատարելու կամ

այդպիսի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու ոչ գույքային բնույթի պարտականություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 277 հոդված), և այլն:

Այսպիսով, Օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ինչպես նաև 39-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի կարգավորումները հանգեցնում են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ նաև ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթների կարճմանը՝ այն դեպքում, երբ այդպիսի կատարողական վարույթներով պարտատերերը ՀՀ օրենսդրությամբ ապահովված չեն կարճվող կատարողական վարույթներով կատարման ենթակա իրենց պահանջներն այլ եղանակով ներկայացնելու և դրանց կատարում ստանալու հնարավորությամբ, մասնավորապես՝ ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթը պարտապանի սնանկության հիմքով կարճվելու դեպքում նույն վարույթով պարտատերը չի կարող իր ոչ գույքային բնույթ ունեցող պահանջը ներկայացնել և կատարում ակնկալել սնանկության վարույթի շրջանակներում, քանի որ սնանկության վարույթի շրջանակներում ներկայացվել, քննվել ու կատարվել կարող են միայն գույքային բնույթ ունեցող պահանջները: Սնանկ ճանաչված պարտապանի հանդեպ ոչ գույքային բնույթ ունեցող պահանջներով օժտված պարտատերերի համար համապատասխան և կրկին չարդարացված խոչընդոտներ են նախատեսված Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 4-րդ կետերով նույնպես, որոնք և նախատեսվում է վերացնել ներկայացվող նախագծի 2-րդ հոդվածով:

Այսպիսով, Օրենքի ներկայումս գործող իրավակարգավորումները կատարողական վարույթով պարտապանի սնանկության դեպքում ոչ գույքային բնույթ ունեցող պարտավորությամբ որպես պարտատեր հանդես եկող անձին զրկում են արդեն իսկ ճանաչված ու կատարման փուլում գտնվող իր պահանջի կատարում ստանալու հնարավորությունից, ինչը խնդրահարույց է հատկապես անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտման տեսանկյունից:

Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ, այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն

և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (Տե՛ս նաև Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի որոշումը՝ կետ 34, ինչպես նաև Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40):

Ավելին, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը, հետևաբար հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի վերը նշված հիմնական իրավունքների լույսի ներքո (Տե՛ս թիվ ՎԴ/2127/05/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ Օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ինչպես նաև 39-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի ներկայիս իրավակարգավորումները ոչ գույքային բնույթ ունեցող պահանջով օժտված անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտման տեսանկյունից խնդրահարույց են, և ներկայացված նախագիծն ուղղված է մի կողմից՝ այդպիսի անձանց արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումները բացառելուն՝ պահանջի իրավունքի իրականացումն ապահովելու եղանակով, մյուս կողմից՝ այն ուղղված է ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթների անխափան ու անընդհատ ընթացքի ապահովմանը՝ բացառելով կատարողական վարույթների անհարկի կարճումները:

***<u>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ հիմնավորումները.</u>***

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական

վարույթը, եթե դատարանը գործ է հարուցել պարտապանին սնանկ ճանաչելու մասին կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պարտապան բանկին անվճարունակ է ճանաչել:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե պարտապանը դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Մեջբերված հոդվածներից հետևում է, որ կատարողական վարույթով պարտապանի սնանկության գործընթացը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ազդում է վերջինիս՝ որպես պարտապան ներգրավվածությամբ կատարողական բոլոր վարույթների ընթացքի վրա, մասնավորապես՝

- Կատարողական վարույթով պարտապանի սնանկության վերաբերյալ դատարանում գործ հարուցվելու դեպքում կասեցվում են պարտապանի մասնակցությամբ կատարողական բոլոր վարույթները, որտեղ վերջինս հանդես է գալիս որպես պարտապան.

- Կատարողական վարույթով պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում կարճվում են պարտապանի մասնակցությամբ կատարողական բոլոր վարույթները, որտեղ վերջինս հանդես է գալիս որպես պարտապան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, անձի սնանկության գործընթացն ու բուն սնանկությունն ազդեցություն են ունենում վերջինիս՝ որպես պարտապանի ներգրավվածությամբ կատարողական բոլոր վարույթների վրա՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ընդ որում՝ կատարողական վարույթների կասեցման առումով բացառությունների նախատեսման հնարավորություն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված չէ, և այդպիսի բացառությունների հնարավորությունը նախատեսվում է կատարողական վարույթները կարճելու դեպքում միայն: Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված այդպիսի բացառությունների շարքում ընդգրկված չեն այն կատարողական վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին առաջադրվելու են ոչ գույքային բնույթի պահանջներ, այսինքն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա կասեցման, իսկ 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման վրա՝ կարճման են ենթակա պարտապանի մասնակցությամբ այն կատարողական վարույթները նաև, որոնցով պարտապանին կատարման են առաջադրվում ոչ գույքային բնույթի պարտականություններ, օրինակ՝

- Այլ անձին հասցված վիրավորանքի համար ներողություն խնդրելու ոչ գույքային բնույթի պարտականություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1087.1 հոդված, 7-րդ մաս, 1-ին կետ),

- Այլ անձի վերաբերյալ կատարված, զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալները հերքելու ոչ գույքային բնույթի պարտականություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1087.1 հոդված, 8-րդ մաս, 1-ին կետ),

- Այլ անձի սեփականության իրավունքի խախտման վերացմանն ուղղված գործողություններ կատարելու կամ այդպիսի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու ոչ գույքային բնույթի պարտականություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 277 հոդված), և այլն:

Այսպիսով, Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի կարգավորումները հանգեցնում են սնանկ ճանաչվող կամ արդեն ճանաչված պարտապանի մասնակցությամբ նաև ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթների համապատասխանաբար կասեցմանը և կարճմանը՝ այն դեպքում, երբ այդպիսի կատարողական վարույթներով պարտատերերը ՀՀ օրենսդրությամբ ապահովված չեն կասեցվող կամ կարճվող կատարողական վարույթներով կատարվող իրենց պահանջներն այլ եղանակով ներկայացնելու և դրանց կատարում ստանալու հնարավորությամբ, մասնավորապես՝ ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթը պարտապանի սնանկության հիմքով կարճվելու դեպքում նույն վարույթով պարտատերը չի կարող իր ոչ գույքային բնույթ ունեցող պահանջը ներկայացնել և կատարում ակնկալել սնանկության վարույթի շրջանակներում, քանի որ սնանկության վարույթի շրջանակներում ներկայացվել, քննվել ու կատարվել կարող են միայն գույքային բնույթ ունեցող պահանջները:

Այսպիսով, Օրենքի ներկայումս գործող իրավակարգավորումները կատարողական վարույթով պարտապանի սնանկության դեպքում ոչ գույքային բնույթ ունեցող պարտավորությամբ որպես պարտատեր հանդես եկող անձին զրկում են արդեն իսկ ճանաչված ու կատարման փուլում գտնվող իր պահանջի կատարում ստանալու հնարավորությունից, ինչը խնդրահարույց է հատկապես անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտման տեսանկյունից: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ, այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Յանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (Տե՛ս նաև Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի որոշումը՝

կետ 34, ինչպես նաև Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40):

Ավելին, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը, հետևաբար հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի վերը նշված հիմնական իրավունքների լույսի ներքո (Տե՛ս թիվ ՎԴ/2127/05/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ Օրենքի 37-րդ հոդվածների 4-րդ կետի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ներկայիս իրավակարգավորումները ոչ գույքային բնույթ ունեցող պահանջով օժտված անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտման տեսանկյունից խնդրահարույց են, և ներկայացված նախագիծն ուղղված է մի կողմից՝ այդպիսի անձանց արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումները բացառելուն՝ պահանջի իրավունքի իրականացումն ապահովելու եղանակով, մյուս կողմից՝ այն ուղղված է ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթների անխափան ու անընդհատ ընթացքի ապահովմանը՝ բացառելով կատարողական վարույթների անհարկի կասեցումներն ու կարճումները:

Համեմատության համար դիտարկելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ ըստ էության նույն հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավանորմերը՝ կարող ենք փաստել նաև, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ներկայիս որոշ իրավակարգավորումներ արդեն իսկ ելնում են ներկայացվող նախագծով առաջարկվող լրացումների տրամաբանությունից և համահունչ են առաջարկվող լրացումների հետ: Մասնավորապես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումն ստանալու պահից դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը կասեցնում է պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ բոլոր կատարողական վարույթները:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ Սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները:

Այսպիսով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերը մեջբերված դրույթները կասեցման ենթակա են համարում պարտապանի մասնակցությամբ բացառապես գույքի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթները, մինչդեռ Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետը հարկադիր

կատարողների համար սահմանում է բոլոր տեսակի կատարողական վարույթները կասեցնելու պարտականություն՝ անկախ դրանց գույքային բնույթից, ինչը և նախատեսվում է շտկել նախագծի 1-ին հոդվածով, իսկ 2-րդ հոդվածն ուղղված է ըստ էության համանման խնդրի լուծմանը՝ ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթների բնականոն ու անխափան ընթացքի ապահովմանը պարտապանին սնանկ ճանաչելու դեպքում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«Սնանկության մասին»

օրենքում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

**«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**Հոդված 15.5. Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիումը) սնանկության վտանգի վարույթում**

1. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝

1) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը այլ կերպ, քան ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված կարգով.

2) արգելվում է պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթը սկսելը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով.

3) կարճվում է սնանկության վտանգի վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

Սույն կետում նշված քաղաքացիական գործը կարող է վերսկսվել սնանկության վտանգի վարույթի ավարտից հետո.

4) կասեցվում է դրամական պարտավորությունների և վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը.

5) կարճվում են գույքային բռնագանձումներով և ~~հայցի ապահովման բոլոր կատարողական վարույթները~~ ոչ գույքային բնույթ ունեցող բոլոր կատարողական վարույթները, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների:

Պարտապանի մասնակցությամբ ոչ գույքային բնույթ ունեցող կատարողական վարույթները (այդ թվում՝ ոչ գույքային բնույթ ունեցող և պարտապանի գույքին չառնչվող հայցի ապահովման վերաբերյալ կատարողական վարույթները) սույն կետի հիմքով կարճման ենթակա չեն:

2. Մորատորիումի գործողությունը չի տարածվում՝

1) ալիմենտների բռնագանձման վրա.

2) ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա.

3) սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը կայացնելուց հետո ընկած ժամանակահատվածում պարտապանի ստանձնած պարտավորությունների վրա.

4) ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումն արտադատական կարգով: Ապահովված իրավունքի առարկայի արտադատական կարգով իրացման նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 39.1-ին և 39.2-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները.

5) սույն օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերում:

3. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ շարունակում է ներկայացնել պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը և կրում է դրանք չներկայացնելու կամ ոչ պատշաճ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

4. Մորատորիումը շարունակվում է մինչև տվյալ սնանկության վտանգի վարույթով ֆինանսական առողջացման ծրագրի ավարտի օրը:

**Հոդված 39. Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիում)**

1. Սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից՝

ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն

պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների.

բ) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, բացառությամբ սույն օրենքի 55-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի.

գ) կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները.

դ) արգելվում է պարտատիրոջ՝ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը՝ պարտապանի նկատմամբ ունեցածիր պահանջի հետ, բացառությամբ սույն օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝

1) պարտապանի պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված.

2) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին ~~դրամական կամ այլ~~ գույքային բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի.

3) դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով

պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը.

4) կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի գույքային պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով.

5) կարճվում է պարտապանի վերաբերյալ ~~հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի~~ գույքային բռնագանձման և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների և սույն օրենքով սահմանված այլ դեպքերի.

6) վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները:

3. Մորատորիումի գործողությունը չի տարածվում՝

ա) ալիմենտների բռնագանձման վրա.

բ) միջանկյալ բաշխման ծրագրերով ժամանակավոր կառավարչի վարձատրության, վարչական և պարտապանի ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսերի վրա.

գ) ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական կարգով.

դ) ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում, պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած

պարտավորությունների կատարման վրա.

ե) սույն օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերում:

4. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ շարունակում է ներկայացնել պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը և կրում է դրանք չներկայացնելու կամ ոչ պատշաճ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

5. Պարտապանի գործունեության կասեցման պահից վերջինիս անունից կառավարիչը ներկայացնում է՝

ա) սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվության, այդ թվում՝ ապահովված պարտատիրոջ կողմից ներկայացված տեղեկատվությունը (որի հիման վրա հաշվարկվում են պարտապանի հարկային պարտավորությունները), և դրանք գրանցում է պարտատերերի գրանցամատյանում՝ համապատասխան հերթում.

բ) պարտապանի գործունեությունը վերսկսվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ:

6. Մորատորիումը շարունակվում է մինչև տվյալ սնանկության գործի ավարտը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

**Հոդված 37. Կատարողական վարույթը կասեցնելու հարկադիր կատարողի պարտականությունը**

Հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե՝

1) (կետն ուժը կորցրել է 16.12.05 ՀՕ-18-Ն)

2) պարտապանը ճանաչվել է անգործունակ և չունի օրինական ներկայացուցիչ.

3) պարտապանը զինված ուժերի և այլ զորքերի կազմում մասնակցում է մարտական գործողությունների, կամ առկա է նմանատիպ պայմաններում գտնվող պահանջատիրոջ խնդրանքը.

4) դատարանը գործ է հարուցել պարտապանին սնանկ ճանաչելու մասին կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պարտապան բանկին անվճարունակ է ճանաչել.

Պարտապանի մասնակցությամբ ոչ գույքային բնույթ ունեցող՝ վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթները սույն կետի հիմքով կասեցման ենթակա չեն:

5) դատարանը վարույթ է ընդունել սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված հայցադիմում այն գույքն արգելանքից հանելու վերաբերյալ, որի վրա բռնագանձում է տարածվել հարուցված կատարողական վարույթով.

6) դատարանը որոշում է կայացրել կատարողական վարույթը կասեցնելու մասին.

7) առկա է հաշտության համաձայնություն կնքելու մասին կողմերի դիմումը.

8) եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը.

9) վարչական դատարանը վարույթ է ընդունել կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ հայց.

10) մահացել է պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձը, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել նրա իրավահաջորդին:

Եթե բռնագանձում է տարածվել մեկից ավելի գույքի նկատմամբ, ապա սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված՝ գույքն արգելանքից հանելու մասին հայցադիմումը դատարանի կողմից վարույթ ընդունվելու դեպքում կատարողական վարույթը կասեցվում է այդ գույքի վրա բռնագանձում տարածելու մասով:

Հարկադիր կատարողը չի կասեցնում կատարողական վարույթը «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում:

**Հոդված 42. Կատարողական վարույթը կարճելը**

1. Հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե՝

1) կատարողական թերթը փաստացի կատարվել է կամ դրանից բխող պարտավորությունը դադարել է օրենքով սահմանված այլ հիմքով.

2) պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի հիման վրա ներկայացված կատարման վերաբերյալ գրության կամ կատարողական մակագրության թերթի պահանջների կամ կատարողական թերթի պահանջների կատարումից հրաժարվելու վերաբերյալ.

3) պահանջատերը և պարտապանը կնքել են հաշտության համաձայնություն, ու այն հաստատել է դատարանը.

4) մահացել է պահանջատեր կամ պարտապան քաղաքացին, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականությունները չեն կարող փոխանցվել նրա իրավահաջորդին.

5) (կետն ուժը կորցրել է 16.12.05 ՀՕ-18-Ն)

6) բեկանվել է դատական ակտը, որի հիման վրա տրվել է կատարողական թերթը, կամ կատարողական մակագրության թերթ տրամադրելու նոտարական գործողությունը ճանաչվել է ոչ իրավաչափ, կամ անվավեր է ճանաչվել կողմերի միջև կնքված նոտարական կարգով վավերացված համաձայնագիրը, որի հիման վրա տրվել է կատարողական մակագրության թերթը.

7) պահանջատերը հրաժարվել է ընդունել կատարողական թերթը կամ կատարողական մակագրության թերթը կատարելիս պարտապանից առգրավված և պահանջատիրոջը հանձնելու ենթակա գույքը.

8) պարտապանը դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ.

Պարտապանի մասնակցությամբ ոչ գույքային բնույթ ունեցող՝ վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթները սույն կետի հիմքով կարճման ենթակա չեն:

9) պարտապան-իրավաբանական անձը կամ պահանջատեր-իրավաբանական անձը լուծարվել է.

10) հայցը թողնվել է առանց քննության, մերժվել է, կամ դատական գործի վարույթը կարճվել է.

11) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ անձը կատարել է իր պարտավորությունը մինչև անբողոքարկելի վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը.

12) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտը անբողոքարկելի դառնալու հիմքը.

13) (կետն ուժը կորցրել է 08.12.17 ՀՕ-258-Ն)

14) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին չեն համապատասխանում.

15) վարչական մարմնի արգելանք դնելու մասին որոշման կատարման ընթացքում պարզվել է, որ անձը կատարել է իր պարտավորությունը մինչև արգելանք դնելու մասին վարչական մարմնի որոշում կայացնելը կամ մինչև արգելանք դնելու մասին վարչական մարմնի որոշումը հարկադիր կատարման ուղարկելը:

1.1. Անշարժ կամ համապատասխան իրավունքների պետական գրանցում պահանջող գույքի նկատմամբ պետության կամ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին հարկադիր կատարողի որոշումը և կատարողական թերթի պատճենը հարկադիր կատարողն ուղարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմին կամ համապատասխան համայնքի ղեկավարին՝ վերջիններիս կողմից իրավունքների պետական գրանցումն իրականացնելու համար: Հարկադիր կատարողի որոշումը և կատարողական թերթի պատճենը պետական լիազոր մարմին կամ համայնքի ղեկավարին ուղարկելու օրվանից հետո՝ երեք օրվա ընթացքում, հարկադիր կատարողը որոշում է կայացնում կատարողական վարույթը կարճելու մասին:

2. Հարկադիր կատարողը կայացնում է որոշում կատարողական վարույթը կարճելու մասին, եթե բռնագանձված են վճարման ենթակա կատարողական ծախսերը:

3. Կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքով կատարողական վարույթը կարճելու դեպքում հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճելու մասին որոշումը և

պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագրի պատճենը կատարողական վարույթը կարճելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, համապատասխանաբար ուղարկում է պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին վճիռը կայացրած դատարան: